ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

STATE SERVICE FOR FOOD SAFETY
OF THE MINISTRY OF AGRICULTURE
OF THE REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL

"17" 12 2018
8124-18

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ՝ 091407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am

ի պատասխան 2018թ. դեկտեմբերի 10-ի
GWX9-XZYX-1ORQ գրության

**Հարգելի տիկին Դոյդոյան**

Տեղեկացնում ենք, որ 2016, 2017, 2018թթ. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ստացված հարցումների տարեկան վիճակագրությունը պաշտոնական կայքում չի հրապարակվել:

Տեղեկատվության ստացման **գրավոր** հարցումների վիճակագրությունն այսպիսին է՝

2016թ. 87 հարցում (որից 77-ը քաղաքացի, 2-ը ՀԿ,8-ը լրագրող),
2017թ. 186 հարցում (որից 157-ը քաղաքացի, 9-ը ՀԿ,20-ը լրագրող),
2018թ. երեք եռամսյակներում 204 հարցում (որից 180-ը քաղաքացի, 3-ը ՀԿ, 21-ը լրագրող (համապատասխանաբար՝ առաջին եռամսյակ՝ 85, 1, 3, երկրորդ եռամսյակ՝ 51, 1, 6, երրորդ եռամսյակ՝ 44, 1, 12)):

Տեղեկատվության ստացման **բանավոր** հարցումների վիճակագրությունն այսպիսին է՝

2016թ-ին 654 (21-ը լրագրող),
2017թ-ին 2352 (30-ը լրագրող)
2018թ. առաջին երեք եռամսյակներում 2211 հարցում (առաջին եռամսյակ՝ 316, որից 26-ը լրագրող, երկրորդ եռամսյակ՝ 638, որից 19-ը լրագրող, երրորդ եռամսյակ 1257, որից 32-ը լրագրող):

2018թ. բանավոր հարցումների քանակը պայմանավորված է թեժ գծի երկրորդ հեռախոսահամարի ավելացմամբ:

Քաղաքացիներից հարցումները հիմնականում ՀՀ և երրորդ երկրների ռեեստրներում գրանցվելու, սննդամթերքի արտահանման, ներմուծման, սննդի շղթայի օպերատորների բազայում գրանցվելու, արտադրական գործունեություն իրականացնելու, սննդամթերքի որակի և անվտանգության, հացի և մսի տեղափոխման պայմաններին ներկացվող պահանջների, արտահանողների արտադրական գործունեության տվյալների բազայում գրանցվելու կարգի, Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների, սպանդանոցային մորթի անցնելու ժամանակացույցի, վերահսկողության իրականացման գործիքների և այլնի վերաբերյալ են: Լրագրողների և ՀԿ-ների հարցումները, բացի վերը նշված հարցերից, նաև ունենում են ավելի մասնագիտական բնույթ, վերաբերում են թիրախային վերահսկողությանը:

Բոլոր հարցումները ստացել են սպառիչ պատասխաններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին/Վ. Հարությունյան,
Հեռ՝ 012404045